

**Ընտրութիւն եւ Օծում
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաքողիկոսի**

1999 Յունիս 29-ին կանխահաս մահով աչքերը փակեց Ն.Ս.Օ.Տ.Տ.
Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաքողիկոսը, Խուսաւորչի Արռողին բազմած
181-րդ Հայրապետը:

Յուլիս 4-ին, Մայր Արռող Ա. Էջմիածնի մէջ, ժողովին մասնակցելու
իրաւունք ունեցող 58 հրաւիրեալներէն Յնը Գերագոյն Հոգեւոր խորհուրդի
անդամներով եւ Եպիսկոպոսներով համատեղ, Կաքողիկոսական Տեղապահ
ընտրեց Մայր Արռող Ա. Էջմիածնի դիւնանապետ Տ. Ներսէս Արք.
Պողապալեանը, յանձն առնելու կաքողիկոսարանի աշխատանքները մինչեւ
նոր Հայրապետի մը ընտրութիւնը:

1999 Հոկտեմբեր 26-ին Մայր Արռող Ա. Էջմիածնի մէջ գումարուեցաւ
Եպիսկոպոսաց ժողովը, որուն կը նախագահէր Կաքողիկոսական Տեղապահ
Տ. Ներսէս Արք. Պողապալեան: Ժողովը Քննեց Ազգային-Եկեղեցական
ժողովի օրակարգի գործընթացը եւ նկատի առաջ այլ հարցեր որոնք կը
յուգեն հայ Եկեղեցին թէ՝ Հայաստանէն ներս եւ թէ Հայաստանէն դուրս:

Այդ օր առաւօտեան, Ա. Էջմիածնի մէջ Ա. Պատորագ մատուցանեց
Գեր. Տ. Վիգէն Սպս. Այխազեան, որուն ընթացքին հաղորդուեցան
Ազգային-Եկեղեցական Պատգամաւորները, իրենք զիրենք հոգապէս
պատրաստելու ընտրութեան համար:

Ազգային-Եկեղեցական ժողովի Պատգամաւորները կուգային աշխարհի
բոլոր այն երկիրներէն ուր կային հայկական գաղութներ: Իւրաքանչիւր
երկիրէ ընտրուած պատգամաւորներու թիւը կ'որոշուի հայ Եկեղեցւոյ
աւագանին մէջ մկրտութեամբ անդամ դարձած հաւատացեալներու թիւին
համաձայն:

Այդ պատգամաւորութեան մաս կազմեցին իրեւ ընտրեալ
պատգամաւորները:-

Երաւանելի Ա. Արռողէն

Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան

Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան

Խարայէ-Պաղեստինէն

Տոքք. Կարօ Յ. Կաքոպետեան

Պրմ. Ստեփան Տէր Վարդանեան

Յորդանանէն

Պրմ. Հրանդ Նագդաշեան

Կեսօրէ ետք ժամը Զ-ին տեղի ունեցաւ պատգամաւորներու
արձանագրութիւն:

Հոկտեմբեր 27 առաւտան ժամը 10-ին Ազգային-Սկզբանական ժողովը քացուեցաւ Վեհարանի ժողովապահին մէջ աղօթքով:

Տեղի ունեցաւ պատգամաւորներու ստուգում, որոնց գումարն էր, ըստ քուեարկդներուն, 450 հոգի: Ապա ժողովին ներս մուտք գործեց ժողովի նախագահ և Կարողիկոսական Տեղապահ Տ. Ներսէս Արք. Պողապալեան, իր կողմին ունենալով նրուսադէմի Պատրիարք Տ. Թորգոն Արք. Մանուկեան և Պոլսոյ Պատրիարք Տ. Մելքոն Արք. Մուրաֆեան: Նաև Հայաստանի կրօնից խորհուրդի պաշտօնականար Պր. Լեւոն Մկրտչեան, որ իր ողջոննի խօսքը եւ բարեմաղբութիւնները ըրաւ եւ ապա ունկնդրելէ ետք Կաթողիկոսական Տեղապահի գեկոյցը մեկնեցաւ ժողովէն:

Ժողովը ընտրեց իր դիւանը որ կառավարեց կաթողիկոսական ընտրութիւնը ըստ կանոնադրութեան: Կարդացուցան բոլոր նպասկոպոսներուն անունները, եւ անոնք որոնք չուզեցին կաթողիկոսութեան համար թեկնածու Ակատուիկ, տեղույն վրայ յայտնեցին իրենց այդ փափաքը: Ընտրութեան ցանկին վրայ մնացին միայն երկու անուններ՝ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսէս Արք. Պողապալեան և Արքատեան թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ. Գարեգին Արք. Ներսիսեան:

Այստեղ ժողովը դադար առաւ կեսօրուայ ճաշի համար:

Կեօրէ ետք ժամը Զ-ին պատգամաւորներ կարգով մուտք գործեցին Ա. Էջմիածնի Մայր Տաճարը քուեարկութեան համար: Երդման արարողութենէն ետք, իւրաքանչիւր պատգամաւոր որ կը կանչուէր, կը մօնենար եւ կը ստանար իր քուեարկութը, կը համրուրէր Աւետարանն ու խաչը եւ քուեատուփին մէջ կը դնէր իր քուէն: Ըստ պատգամաւորներու քուեարկուն Տ. Գարեգին Արք. Ներսիսեան ստացաւ 276 քուեններ, Տ. Ներսէս Արք. Պողապալեան ստացաւ 163 քուեններ, իսկ 11 քուեններ անվաներ նկատուցան: Ուրեմն, Պատգամաւորներու մեծամասնութեան քուեարկով, Գարեգին Արք. Ներսիսեան ընտրուցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս: Ընտրութեան լուրը պիտուցաւ եկեղեցւոյ զանգակներու դօղանցով: Հայրապետական Արքուի սգոյ նշան սեր Քողը վերցուցաւ եւ Ա. Սեղանի վարագոյրը քացուեցաւ: Նորընտիր Հայրապետը ծնրադրեց Ա. Սեղանին առաջ եւ իր աղօթքը ըրաւ: Ապա, իր շնորհակալութեան խօսքը ըստ պատգամաւորներուն եւ շեշտը դրաւ եկեղեցւոյ եւ պետութեան սերտ յարաբերութեան եւ ժողովուրդի միասնականութեան եւ համագործակցութեան վրայ:

Դժբախտաբար, պատգամաւորներու ուրախութեան պահը մթագնեցաւ երբ Երեանէն արիւնայի անարթեկնութեան լուրը գուծեց Հայաստանի խորհրդարաննեն ներս սպանութիւնը Հայաստանի Կարչապետին՝ Վազգէն Սարգսեանին եւ Ազգային ժողովի նախագահ Կարէն Տէմիրեաննեն եւ այլ պատգամաւորներու: Նորընտիր Հայրապետը հաղորդեց այս լուրը պատգամաւորներուն իր պատգամին ընդհատումով եւ «հոգուց» մը արտասանեց այդ պահուն: Ապա եկեղեցականաց եւ պատգամաւորներու բախօրը առաջնորդեց Վեհ. Հայրապետը դէսի վեհարանի դահլիճը, ուր բալրը շնորհաւորեցին Նորընտիր Կաթողիկոսը:

Հինգշարքի, Հոկտեմբեր 28-ին առաւտեան ժամը 10-ին, Նորբնտիք Գարեգին Բ. Կաթողիկոս Աստվածածին Ազգային-Եկեղեցական ժողովի Բ. Նիստին: Բոլորին սիրու ընկերուած եւ վրդովուած էր երեկի կատարուած սպանութիւններուն պատճառով: Ժողովը կերպուացաւ միայն եկեղեցոյ կանոնադրութեան հարցին վրայ, զոր ներկայացուց Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփիան, Առաջնորդ Հիւս. Ամերիկայի Արքունիք թեմի, որոշելով որ կանոնադրութեան ծրագիրը պէտք է իր աւարտին հասնի 2000 թուի Հոկտեմբերին: Ապա յայտարարուեցաւ որ ժողովը փակուած է:

Նոյն օր Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ ժամանեց Մայր Աթոռ: Հայաստանի խորհրդարանի մէջ կատարուած սպանութեանց պատճառով, ստիպողաբար, նորբնտիք Կաթողիկոսի Օծման եւ Դահակալութեան բուականը յետագուեցաւ յաջորդ շարքուան:

Կիրակի, Հոկտեմբեր 61-ին տեղի ունեցաւ կրօնական «Տան Կարգ»ի արարողութիւն օվերայի դահինին մէջ, ահարելքութեան զոհ անձերուն համար:

Հինգշարքի, Նոյեմբեր 4-ի առաւտեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տանարին մէջ կատարուեցաւ նորբնտիք Հայրապետին Կաթողիկոսական օծումը մասնակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.ի, եւ նրուսադեմի Ամեն. Պատրիարք Տ. Թորգոն Արք. Մանուկեանի եւ Կ. Պոլսոյ Ամեն. Պատրիարք Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեանի:

Օծման արարողութեան ներկայ գոտնուեցան որոշ բիուլ պատգամաւորներ, Հայաստանի Հանրապետութեան նախագահ Պրե. Ռոբերտ Քոչարեան եւ Պետութեան աւագանին ու զանազան եկեղեցիներու ներկայացուցիչներ:

Ահա այսպէս Հայ Եկեղեցին ունեցաւ 13Զրդ Ամենայն Հայոց Հայրապետը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս որ բազմեցաւ Ս. Լուսաւորչի գահին:

Կեսօրէ ետք, Միարանից սեղանատան մէջ տեղի ունեցաւ նաշ ուր հոգեւորականութիւնը եւ այլ եկեղեցւոյ ներկայացուցիչներ ներկայ էին, որոնք շնորհաւորութիւններ եւ բարի մաղրանքներ ըրին նորաօծ Ամենայն Հայոց Հայրապետին:

Վեհափառ Հայրապետը օրինեց բոլորը եւ մաղրեց որ սիրոյ, խաղաղութեան եւ համագործակցութեան պատղաբերութեամբ գործեն Հայ Եկեղեցւոյ եւ Հայրենիքի վերելքին համար:

Սրբոց Յակոբեանց Միարանութիւնը գլխաւորութեամբ Ամեն. Տ. Թորգոն Արք. Մանուկեան Պատրիարքի կը յայտնէ իր ուրախութիւնը եւ կը յդէ իր շնորհաւորութիւնները ու բարեմաղրութիւնները նորբնտիք եւ նորաօծ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին:

ՍԱՄՈՒԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՂՋՅԵՍՆ